(Դրուագ հայկական ազատագրութեան, բարքեր և սովորութիւններ)

Արդ՝ այս հրովարտակն ետ ի ձեռս այն 20 հայկէշից և եղ զնոսա ի հինգ պատրաստեալ նաւսն և առաքեաց ի Միւսեմպիկ։

Եւ գնացեալ հասին ի Միւսեմպիկ, և տարեալ ետուն զթագաւորական հրովարտակն ի ձեռս ճէներալ սպարապետին։

Եւ նա մինչ ընթերցեալ ծանեաւ զհրաման թագաւորի, խսկոյն ետ հանել ի նաւուց զկահկարասի պատերազմին ի ցամաք և զզօրսն զամենայն, և չու արարեալ ելին ի Միւսեմպիկէն։ Բայց քանզի յոյժ տաժանելի էր ճանապարհն, զի ի բարձրաբերձ լերանց և ի մեծամեծ անտառաց պարտէին անցանել՝ յորս ոչ գոյր ճանապարհ, այլ եւս բազում գետք առանց կամրջի՝ ցեխ և ջրադաշտ դժուարանց գոլով հազիւ ի չորս ամիսն հասին ի սահմանս կեօնտէրու։

Իսկ այն ապստամբ մահմետականքն որք տիրապետեալ էին զկեօնտէր, երբ լուեալ զայս թէ Բորթուկէզ Ֆրանկք գան ամբոք թօփերօք, որք յոյժ երկնչէին ի Ֆրանկաց և ի թօփից նոցին, զի ինքեանք ոչ ունէին զթօփս հրացանից, և ոչ եւս գիտէին զգործածութիւնս նոցին, և մինչեւ ցայսօր հայկէշք եւս ոչ գործածեն զթօփս։

Ուստի ընդ լսելն, թողեալ զքաղաքն մահմետականք փախեան։ Եւ ճէներալն առանց ինչ պատերազմի մտեալ ի քաղաքն տիրապետեցին զկեօնտէր, և զՍիմոն կամ Գլաւտիս թագաւորն իջուցին ի լեռնէ անտի ուր են ցեղք թագաւորի, և նստուցին ի յաթոռ թագաւորութեան իւրոյ, որ ի յապստամբութեան մնաց ի ձեռս տաճկաց կեօնտէր ամս 10։ (Թերեւս ամիսս։ Ծ. հր.)

Եւ ապա աստ և անդ հոչակ աւետման առաքէին, և զցրուեալ հայկէշն ժողովէին։ Եւ ուր ուրեք հասեալ գտանէին զմահմետական ապստամբեալսն՝ չարաչար կոտորէին և դիաթաւալ կացուցանէին զնոսա։ Բայց յետ ամաց ինչ թոյլտուութիւն ելեալ է մահմետականաց վերստին գալ և մտանել ի քաղաքն կեօնտէր, իբրեւ ստրուկ ռայէ, և ոչ որպէս յառաջն խռնեալ բնակիլ ընդ քրիստոնէ հայկէշից, այլ ի վայրագոյն տեղւոջ միախումբ բնակել և փոքր թուով։

1765 Այլ արդ յորժամ կատարեցաւ ամենայն ինչ և նստաւ Սիմոն կամ Գլաւտիս թագաւորն ի յաթոռ իւր յիշեցուցանէ նմա ճէնէռալն զխոստումն այնց քանիցանձանց հայկէշին, որ ի Հռոմ որպէս գնացեալ առաջի Պապին ետուն զուղղափառ դաւանութիւնս ասելով, թէ մեք բնաւքս ուղղափառ եմք, և ըստ այնմ սրբազան Պապն զրեաց առ Բորթուկէզ թագաւորն իմ, և նա զրեաց ինձ Միւսեմպիկ ճէնէրալիս, թէ յետ առնլոյ զքաղաքն կեօնտէր ի յապստամբից և տալոյ հայկէշից, այլ և ըստ խոստմանց նոցին պարտիս կարգաղրել զեկեղեցիս նոցին ուղղափառապէս, նա եւս կացուցցես զմի եկեղեցական գլուխ կամ եպիսկոպոս որ ըստ այնմ հովուեսցէ զնոսա։

Յայնժամ Սիմոն կամ Գլաւտիս թագաւորն և այլք մեծամեծք, և այնոքիկ որ ի Հռոմ գնացեալ էին, լի բերանով հաստատէին, և ստուգեցեալ զբանս սպարապետին, ընկալան և կարգաղրեցին զամենայն եկեղեցիս ուղղափառապէս։ Այլ եւս յիշել ի պատարագի զՊապն Գրիգոր և զԲորթուկէզ թագաւորն Յովհաննէս։ Այլ եւս զմինն ի գիտուն և ի պատուաւոր լաթին քահանայից ճէնէրալն ետ խորհրդովն թագաւորի գլուխ նոցա, որ մնասցէ անդ և հովուեսցէ զեկեղեցիս նոցին ի դիպուկ ժամու։

Եւ թագաւորն Սիմոն կամ Գլաւտիս էառ ի պալատ իւր զայն լաթին քահանայն և զամենայն պէտս և զոռճիկն տայր նորին։

Արդ՝ ճէնէրալն յետ ուղղելոյ զթագաւորութիւն հայկէշի, և կարգաղրելոյ զեկեղեցիս նոցին ուղղափառապէս և յետ անցանելոյ ամաց երից՝ կամեցաւ դարձ առնել։

Յայնժամ Սիմոն կամ Գլաւտիս թագաւորն հանդերձ իշխանօք իւրովք պատրաստեցին զչորս ուղտս բեռնաւորեալ